

ՀՏԴ 159.9

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՐՑԱՔՆՆՈՂԻ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Գիտակրթական միջազգային կենտրոն

Հաշվի առնելով այն, որ քրեական գործով վարույթի իրականացման ընթացքի օբյեկտիվության և բազմակողմանիության վրա էապես ազդող գործոն է արդյունավետ հարցաքննությունների ապահովումը, որի առանցքային կողմերից մեկը բարոյագիտական առանձնահատկությունների դիտարկումն է՝ սույն հոդվածում ներկայացվում են արդյունավետ հարցաքննության կազմակերպմանը նպաստող բարոյագիտական առանձնահատկությունները՝ որպես դրանց ապահովման հիմնական երաշխիք ներկայացնելով հարցաքննողի անձին ուղղված պահանջները:

Բանալի բառեր. հարցաքննություն, բարոյագիտական առանձնահատկություններ, հարցաքննողի փսիխոգրամմա:

Հարցաքննությունը քննչական գործողություն է, որի իրականացման անհրաժեշտությունը քննչական պրակտիկայում առաջանում է բավականին հաճախ և ի տարբերություն այլ քննչական գործողությունների՝ իրականացվում է հարուցված գրեթե բոլոր քրեական գործերով, հաճախ նախապատրաստում համապատասխան հիմքեր հետագա քննչական գործողությունների կատարման համար և հանդիսանում կարևոր նշանակություն ունեցող նախնական, իսկ երբեմն նաև հիմնական ապացուցողական բազան [1]:

Հարցաքննության գրագետ ընթացքի ապահովմանն ուղղված համապատասխան իրավանորմերը սահմանվում են միջազգային և ներպետական համապատասխան օրենսդրությամբ, ուստի սույն հոդվածում ներկայացվում են հարցաքննության և հարցաքննողի էթիկայի հոգեբանական հիմնախնդիրները: Նախևառաջ կարևոր է շեշտել, որ հարցաքննության բարոյագիտական առանձնահատկությունները սերտորեն փոխկապակցված են հարցաքննողի՝ որպես մասնագետի անձնային որակների և մասնագիտական կարողությունների հետ, քանի որ հարցաքննությունը ենթադրում է անձ-անձ փոխհարաբերություն, և որքան էլ դրա ընթացքը նորմավորվում է օրենսդրության շրջանակներում, միևնույնն է, հանդիսանալով մարդկային փոխհարաբերության ձև՝ ենթադրում է որոշակի սուբյեկտիվություն և որպեսզի այն չվերածվի կամայականության, խիստ դիտարկելի են մի շարք հոգեբանական գործոններ, որոնք հանդիսանում են հար-

ցաքննության բարոյական նորմավորման նախադրյալներ՝ միևնույն ժամանակ հանդիսանալով իրավանորմերի պահպանման կարևոր հիմքերից մեկը: Իհարկե, տարբեր տարիքի, դատավարական կարգավիճակի և այլ առանձնահատկություններով պայմանավորված հարցաքննությունների դեպքում հարցաքննողից պահանջվում են տարբեր մոտեցումներ և աշխատելաճ, սակայն հարցաքննության գնահատման շրջանակներում անժխտելի փաստ է, որ այն կարող է արդյունավետ լինել բացառապես այն դեպքերում, երբ հարցաքննողի կրթական մակարդակը, գործնական հմտությունները և անձնային որակները բավարարում են մասնագիտական բարոյագիտության պահանջներին, այլապես վերջինիս աշխատանքը ոչ միայն կարող է լինել անարդյունավետ կամ կրել ձևական բնույթ, այլև բացասաբար անդրադառնալ ողջ քրեական վարույթի իրականացման ընթացքի վրա: Խոսքն առավելապես վերաբերում է այն դեպքերին, երբ հարցաքննվողի անձնային առանձնահատկություններով կամ քննվող գործի յուրահատկություններով պայմանավորված՝ պահանջվում են հատուկ գիտելիքներ, ուրույն գործելաճ և յուրօրինակ ռազմավարություն:

Հաշվի առնելով այն, որ հարցաքննություն իրականացնելու իրավասությունն օրենքով սահմանված կարգով ենթադրում է նաև համապատասխան կրթական մակարդակի առկայություն՝ հարցաքննողի անձին ներկայացվող պահանջների շրջանակներում ստորև անդրադարձ է կատարվում միայն հարցաքննողի անձնային առանձնահատկությունների և գործնական հմտությունների հիմնախնդիրներին: Անձնային առանձնահատկությունների տեսասանկյունից ուշագրավ է, որ քննիչի աշխատանքային գործունեությունն առհասարակ դիտարկելի է համապատասխան պրոֆեսիոգրամմայի (մասնագիտության սոցիալ-տնտեսական, արտադրական, տեխնիկական, հոգեբանական և այլ առանձնահատկությունների ամբողջություն) և դրանից բխող փսիխոգրամմայի (տվյալ աշխատանքային գործունեության հաջող իրականացման համար անհրաժեշտ որակների առանձնացում և նկարագրում) շրջանակներում [3]:

Կարևոր է նշել, որ պրոֆեսիոգրամման կոնկրետ մասնագիտության առանձնահատկությունների բնութագիրն է, որը բացահայտում է մասնագիտական աշխատանքի և մասնագետին ներկայացվող պահանջների յուրահատկությունները, փսիխոգրամման կոնկրետ մասնագիտության համար անհրաժեշտ անձի հոգեբանական հատկանիշների համակցությունն է, որը հնարավորություն է տալիս կազմել մասնագետի իդեալական կերպարը [2]:

Հաշվի առնելով այն, որ քննիչի փսիխոգրամման կազմող հատկություններն անմիջականորեն հանդիսանում են նաև արդյունավետ հարցաքննության իրականացման նախադրյալ՝ առանձնահատուկ կարևոր է նշել, որ այդ հատկությունների շրջանակներում դիտարկելի են և՛ հարցաքննողի բարոյական կերպարը՝ արժեհամակարգի դրսևորումներով, և՛ այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ (այդ

թվում՝ իմացական ոլորտի), ինչպիսիք են ինտելեկտի ընդհանուր զարգացվածությունը, ուշադրության կայունությունը, տեղափոխելիությունը, երկարատև հիշողությունը, հուզականային կայունությունը, ինքնուրույնությունը, սկզբունքայնությունը, զգուշավորությունը, վճռականությունը, ինքնատիրապետումը, հաստատականությունը, նախաձեռնողականությունը և այլն: Այստեղ, թերևս, արդարացիորեն կարող է հարց ծագել. վերոնշյալ անձնային առանձնահատկություններն արդյո՞ք ենթակա են զարգացման, թե դիտարկելի են միայն որպես այնպիսի որակներ, որոնցով քննիչը պետք է օժտված լինի ի սկզբանե: Եթե հարցին անդրադառնանք այն տեսանկյունից, որ քննիչի աշխատանքային գործունեությունը և, մասնավորապես, արդյունավետ հարցաքննություն վարելու կարողությունը ենթադրում է աշխատանքային փորձառությամբ մշակվող արդյունավետ գործելաոճի համակարգ, ապա հաստատապես կարելի է նշել, որ քննիչն ինքն իր աշխատանքային գործունեության ընթացքում կերտում է իր մասնագիտական կերպարը, ուստի բազմաթիվ որակներ գուցե և նախկինում անհրաժեշտության բացակայության պայմաններում արտահայված չլինեն և սկսեն դրսևորվել որպես աշխատանքային գործունեության ընթացքում առաջացող մարտահրավերների պատասխան, սակայն այդ պարագայում առկա է սեփական հայեցողությամբ գործելու և սեփական սխալներն ամրապնդելու բավականին բարձր ռիսկայնություն, որն առավելապես դրսևորվում է այն դեպքերում, երբ մասնագետի մոտ բացակայում է սովորելու ցանկությունը, և հատկապես արմատավորվում է որոշակի աշխատանքային փորձ ձեռք բերելու ընթացքում, երբ մասնագետը թյուրիմացաբար կարծում է, որ եթե ինքը որոշակի տարիների աշխատանքային փորձառություն ունի, ուստի դա ավելի քան բավարար է իր գործի գիտակը համարվելու համար: Մասնագիտական էթիկայի տեսանկյունից այսօրինակ, կարելի է ասել «ինքնագոհ» մոտեցումը կարող է հանգեցնել մի շարք բացթողումների, հաճախ նույնիսկ կոպիտ սխալների: Օրինակ՝ եթե քննիչը գիտի, որ հարցաքննության արդյունավետության համար կարևոր են իր այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ հաստատականությունը, վճռականությունը և սկզբունքայնությունը, սակայն դրանք չեն հանդիսանում նրան բնութագրող ներքին կայուն որակներ, ինքնաբավության արդյունք, այլ պարզապես դրսևորվում են որպես վերջինիս «ուժը» ի ցույց դնելու ցանկություն, ապա հարցաքննության առանցքային որակումներից մեկը դառնում է քննիչի ավտորիտար (բռնապետական) և մեղադրական գործելաոճը, որը ոչ միայն կարող է խոչընդոտ հանդիսանալ արդյունավետ հաղորդակցման հաստատման առումով, այլև առհասարակ հանգեցնել հարցաքննվողի կողմից իրողությունները հայտնելու պատրաստականության իսպառ բացակայությանը, ինչի արդյունքում քննիչի անզորության զգացումը փոխակերպվում է իր

ազդեցիկությունն ընդգծելու առավել մեծ միտումով և հանգեցնում նախահարձակ (ագրեսիվ) դրսևորումների: Իհարկե, տեղին է շեշտադրել, որ որոշ դեպքերում, օրինակ՝ նախկինում ազատարկման դատապարտված անձանց հարցաքննության ընթացքում առավել քան կարևոր է հարցաքննողի սկզբունքային և հաստատակամ լինելը, հոգեբանական ներազդեցության ենթակա չլինելը և սեփական շահի շրջանակներում հարցաքննողին մոլորեցնելու հակված անձին «զինաթափել» կարողանալը, սակայն եթե հարցաքննողի ազդեցիկությունը ոչ թե ինքնաբավության և գրագետ ռազմավարություն ընտրելու կարողության ամբողջություն է, այլ հարցաքննվողին վախեցնելու միտում՝ հավանական տարբեր դրսևորումներով, ապա հարցաքննությունը ոչ միայն հնարավոր չէ դիտարկել բարոյագիտության պարզագույն նորմերի շրջանակներում, այլև իրավիճակի վերահսկողությունն առավել դժվար պահպանելու հետևանքով բավականին բարձր է և՛ բախումային իրավիճակի, և՛ հենց քննիչի համար առավել բարդ հետագա իրադրությունների առաջացման հավանականությունը, քանի որ նման դեպքերում հարցաննվողները հաճախ նպատակաուղղված կերպով ստեղծում են իրավիճակներ հենց քննիչի սխալվելու և գործի ընթացքը բոլորովին այլ ուղղությամբ շեղելու համար (ինչպես, օրինակ՝ իր իսկ կողմից կատարած հանցանքից խուսափելու նկատառումներից ելնելով՝ քննիչի կողմից հոգեբանական ճնշման, բռնության կամ սպառնալիքի պայմաններում տեղեկություններ ձեռք բերելու համար բողոք ներկայացնելու բավականին տարածված միտումը):

Արդյունավետ հարցաքննության իրականացման համար նախադրյալ հանդիսացող գործնական հմտությունների շրջանակներում առավելապես դիտարկելի են քննիչի հաղորդակցման հմտությունները (այդ թվում վստահության մթնոլորտ ստեղծելու կարողությունը, խոսքի հասկանալիությունը, արտահայտչականությունը, բովանդակալիությունը և ներգործունությունը, լսելու ունակությունը, խոսքի ընթացքում առաջացող դադարները ճիշտ օգտագործելու ունակությունը և այլն), անհրաժեշտ տեղեկություններն արագ և որակյալ արձանագրելու ունակությունը, դիտողականությունը, ըստ հարցաքննվողի անձնային առանձնահատկությունների և քննվող գործի յուրահատկությունների առավել գործուն ռազմավարություն ընտրելու և իրագործելու կարողությունը, որոնք ենթակա են ուսուցանման, և քննիչի համապատասխան մոտիվացիայի և գործնականում դրանք կիրառելու պայմաններում կապահովեն հարցաքննության որակի բարձրացում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով հարցաքննության բարոյագիտական առանձնահատկությունների և հարցաքննության իրականացման տակտիկական հնարքների անմիջական փոխկապակցվածությունը՝ գլխավորապես տեղին է նշել, որ քննիչը՝ որպես հարցաքննություն իրականացնող սուբյեկտ, պատասխանատվություն է կրում հարցաքննության ողջ գործընթացի համար և ուղղակիորեն կամ ոչ միջնորդավորված կեր-

պով արտացոլում է իր աշխարհահայացքը, արժեհամակարգը և մտածողության ոճը, և թեպետ քննիչի աշխատանքի խիստ ծանրաբեռնվածության և սթրեսային իրավիճակներում աշխատելու մշտական անհրաժեշտության պայմաններում, իհարկե, բավականին բարդ խնդիր է միաժամանակյա քննվող տարբեր գործերի դեպքում տարբեր տարիքային խմբերի պատկանող և դատավարական տարբեր կարգավիճակներ ունեցող անձանց հարցաքննությունները վարել բացարձակ գրագետ, սակայն հոգեբանական համապատասխան պատրաստվածության, ինքնավերլուծության հմտությունների և սեփական աշխատանքային գործունեության և դրա արդյունքների նկատմամբ խիստ պատասխանատու մոտեցման պայմաններում մասնագիտական բարոյագիտության պահպանումը որպես առանձին հիմնախնդիր տարբեր իրավիճակներում արտահայտվելու և քննարկման ենթարկվելու հնարավորինս քիչ պատճառներ և առիթներ կունենա, իսկ դրա պահպանումը կհանդիսանա ոչ թե պարզապես համապատասխան նորմերը ձևականորեն պահպանելու ցանկության և հավանական խնդիրներից խուսափելու հետևանք, այլ և համապատասխան փսիխոգրամմայով սահմանված՝ քննիչի անձնային որակների համակցությամբ օժտված լինելու և պատշաճ պատրաստվածության տրամաբանական արտահայտման ձև: Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով քննիչների մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով նոր մեթոդների մշակման և ներդրման արդիականությունը՝ ներկայում խիստ այժմեական է քննիչների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը ինչպես համապատասխան փսիխոգրամմայի կազմման և դրա համաձայն քննիչների թեկնածուների անձնային որակների համապատասխանելիության հոգեբանական գնահատման, այնպես էլ այդ հատկությունների զարգացմանն ուղղված համապատասխան հոգեբանական վերապատրաստումների իրականացմանն ուղղությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Ենգիբարյան Վ. Գ.**, Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա, Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
2. **Պեդրոսյան Մ., Զավադյան Ա., Ամիրյան Դ.**, Անձը և պաշտոնը/.- Եր.: «Պետական ծառայություն» հրատ., 2013.- էջ 344:
3. **Иванова С. В.**, Искусство подбора персонала: Как оценить человека за час. – М., 2005.

ЭТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ДОПРОСА ПРИ ПРЕДВАРИТЕЛЬНОМ СЛЕДСТВИИ И ТРЕБОВАНИЯ ПРЕДЪЯВЛЯЕМЫЕ ЛИЧНОСТИ ДОПРАШИВАЮЩЕГО

АНИ ВАРДАНЯН

Национальная академия наук Республики Армения, Международный научно-образовательный центр

Принимая во внимание тот факт, что на объективность и всесторонность при производстве уголовных дел существенным фактором является проведение эффективных допросов, одной из основных сторон которого является учет этических аспектов, в данной статье представляются этические особенности, способствующие организации эффективного допроса, как основная гарантия их выполнения, представляя требование к личности допрашивающего.

Ключевые слова: допрос, этические особенности, психограмма допрашивающего.

ETHICAL CONSIDERATIONS DURING PRELIMINARY INVESTIGATION AND THE REQUIREMENTS FOR TO AN INTERROGATOR

ANI VARDANYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia, International Scientific-Educational Center

Taking into consideration the fact that ensuring effective interrogations is an important factor that influences the objectivity and versatility of criminal proceedings, one of the key aspects of which is the observation of ethical features, this article presents the ethical considerations that contribute to the organization of the effective interrogation, presenting the requirements for the interrogator as the main guarantee of their provision.

Keywords: interrogation, ethical considerations, psychogram of the interrogator.

*Ներկայացվել է խմբագրություն 26.02.2021
Երաշխավորվել է տպագրության 02.04.2021*